

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**ՎԱՆՏԵՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ**

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրութեան ֆակուլտետի
առկայ բակալավրիատի 3-րդ կուրսի
ուսանող

**ՓՈԽԱՌԵԱԼ ԵՒ ԲՆԻԿ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐԻՍԻ
«ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ ԵՒ ՆՈՐԻՆ ՅԱՒՈՑ»
ԵՐԿՈՒՄ**

Բանալի բառեր. Գրիգորիս, բժշկարան, բառապաշար, բառակազմություն, իմաստաբանություն, ծագումնաբանություն, տերմին, բնիկ և փոխառեալ բառեր:

Key words: Grigoris, medical reference book, vocabulary, word formation, semantics, genealogy term, root and borrowed words.

Գրիգորիսը XII-XIII դդ. նշանաւոր հայ բժշկապետներից է: Ցաւօք, նրա մասին պահպանուել են անշաղկապ, հատուածական տեղեկութիւններ: Բանասիրական տարբեր աղբիւրների վկայութեամբ՝ նա ապրել և գործել է, ամենայն հաւանականութեամբ, Կիլիկեան Հայաստանում: Տեսական և կիրառական խորը գիտելիքների տէր Գրիգորիսը, բացի մայրենի լեզուից, տիրապետել է նաեւ յունարէնին, ասորերէնին, արաբերէնին, պարսկերէնին, որն էլ հնարաւորութիւն է ընձեռել գիտնականին հարուստ և բազմակողմանի գիտելիքներ ձեռք բերել բժշկութեան վերաբերեալ և կատարելագործել իր հմտութիւնները այդ լեզուներով առկայ գիտական գրականութեան հիմքի վրայ:

Գրիգորիսի ամենայայտնի պահպանուած երկը «Քննություն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» ծաւալուն բժշկարանն է, որն իր նշանակութեամբ առանձնայատուկ տեղ է գրաւում միջնադարեան հայ բժշկագիտութեան մէջ: Այն բաժանուած է երեք մեծ գրքերի: Առաջին գրքում, որն իր սկզբի մասով թերի է, հեղինակը առանձին գլուխներով տալիս է ջերմային և արտաքին հիւանդութիւնների նկարագրութիւնը: Երկրորդ գրքում անդրադառնում է ներքին հիւանդութիւններին. սկսում է գլխի և աւարտում ծայրանդամների ախտերով, իսկ վերջին բաժնում մահճաբուժութեանը (կլինիկային) վերաբերող տեսական ու կիրառական կարեւոր նշանակութիւն ունեցող հարցերի քննութիւնն է¹:

Լեզուաբանական առանձնայատկութիւնների տեսանկիւնից դիտարկելով Գրիգորիսի բժշկարանը՝ սոյն աշխատանքում հետազօտել ենք այդ գրքում առկայ փոխառեալ և բնիկ տերմինները (գիտաբառերը), երեւան ենք հանել Գրիգորիսի լեզուաշինական մեծ եռանդը և ունակութիւնները:

Նախ սահմանենք՝ արդի լեզուաբանութեան մէջ ինչպէս են ըմբռնում տերմին կամ գիտաբառ հասկացութիւնը: Հայերէնագիտական բառարանում տրուած է այս

¹ Տե՛ս Գրիգորիս, Քննություն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Եր., 1962, էջ XXXVII:

լեզուական իրողությունների հետեւեալ բնորոշումը².

ա) այն հասկացությունն անուն է,

բ) նրա իմաստը գիտականորեն սահմանելի է, աւելի ստույգ՝ իմաստի հիմքում ընկած է գիտական նշանակությունը, նրա բովանդակության ըմբռնումը միտուած է ճշգրտության (թէեւ յարաբերական), որը և պայմանաւորում է տերմինի գիտական արժէքը: Է. Բ. Աղայեանի բնորոշմամբ. «Տերմինային իմաստը ճշգրտորէն սահմանելի հասկացություն է»: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ ոմանք առաջարկում են տերմինի փոխարէն գործածել գիտաբառ եզրույթը, որը, մեր համոզմամբ լիովին արդարացուած է.

գ) գիտաբառի բովանդակային պլանը միշտ ձգտում է մենիմաստության, տերմինների մեծ մասը մենիմաստ է, թէեւ բազմիմաստություն եւս կարող է լինել. զոր օրինակ՝ լուծել - 1) փորլոծ ունենալ, 2) անդամալոյծ լինել,

դ) տերմինը հիմնականում գոյականական արտայայտություն ունի, կան խօսքի մասեր, որոնք ընդհանրապէս տերմինային արժէք չեն ստանում (օրինակ՝ կապերը, շաղկապները, եղանակաւորողները): Կան նաեւ այնպիսի խօսքի մասեր, որոնք կարող են հանդէս գալ իբրեւ բաղադրեալ տերմինի մաս (օրինակ՝ ածականները, թուականները),

ե) Տերմինը ըստ էութեան զերծ է յուզա-զգացական երանգաւորումներից:

Լեզուաբանութեան մէջ ընդունուած է առանձնացնել գիտական, քաղաքական, տեխնիկական, լեզուաբանական, մաթեմատիկական, բժշկական, քիմիական և այլ գիտակարգերի, գիտաճիւղերի տերմիններ:

Միջնադարեան հայ մատենագրութիւնը, որի հզօր ուղղութիւններից է բժշկագիտութիւնը, հայոց լեզուի պատմութեան համար միշտ եղել է ուսումնասիրութեան հարուստ աղբիւր: Տարժամանակեայ հետազօտութիւնների կենտրոնում ոչ միայն լեզուի ձեւաբանական և շարահիւսական առանձնայատկութիւններն են, այլեւ բառապաշարը: Մեր համոզմամբ, կիլիկեան շրջանի նորմաւորման միջին հայերէնի բառապաշարը դեռեւս բազմաթիւ նոր գաղտնի շերտեր կարող է բացայայտել: Ուստի գիտաբառերի քննութիւնը XII-XIII դդ. նշանաւոր հեղինակ Գրիգորիսի երկերում համարում ենք կարեւոր և բաւականաչափ արդիական: Միջին հայերէնը հայոց տերմինաշինութեան պատմութեան մէջ չափազանց կարեւորում է, քանզի ոսկեդարի, յատկապէս յունաբանների եռանդուն տերմինաստեղծ գործունէութիւնից յետոյ տեւական կանգառ էր տեղի ունեցել: Եւ կիլիկեան շրջանի բժշկագետները դարձան այն գործիչները, որոնք նոր գրական լեզուն բարձրացրին գիտական լեզուի մակարդակի՝ շնորհիւ բազմաթիւ և՛ փոխառեալ, և՛ ինքնուրոյն նոր գիտաբառերի: Ուշագրաւ է, որ Գրիգորիսը «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» երկում գործածել է հարիւրից աւելի հայերէն բառեր ու բժշկական տերմիններ, որոնք բացակայում են Հայկազեան լեզուի նոր բառգրքից և Առձեռն բառարանից³: Սա փաստում է այն, որ բժշկարանն անսպառ նիւթ է մատակարարում միջին հայերէնն ուսումնասիրող լեզուաբաններին:

Միջին հայերէնի բառապաշարին տարբեր ժամանակներում հիմնաւոր, քննական անդրադարձ են կատարել այնպիսի նշանաւոր հայագէտներ ու անուանի լեզուաբաններ, ինչպիսիք են Ղեւոնդ Յովնանեանը, Նորայր Բիւզանդացին, Յոգեֆ Կարստը, Հրաչեա Աճառեանը, Ստեփանոս Մալխասեանը, Մառլենա Մուրատեանը, Ռուբէն Դազարեանը և այլք, բայց բուն տերմինաշինութեանը վերաբերող հատուածներ յոյժ ընդհանրական են և յամառօտ: Ուստի առանձին հեղինակների բառապաշարում գիտաբառերի յատուկ քննութիւնն այսօր արդիական է և պահանջարկուած տարբեր

² Տե՛ս Պետրոսեան Հ. Ձ., Հայերէնագիտական բառարան, Եր., 1987, էջ 579:


³ Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Եր., 1962, էջ LXXI:

մասնագետների կողմից՝ ոչ միայն լեզուաբանների, այլև բնագետների:

Հնդունուած է բուն միջինհայերէնեան բառերը բաժանել բնիկ և փոխառեալ բառերի, նորակազմութիւնների: Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» երկում վկայուած նորակազմութիւնների մասին այս զեկուցման մէջ հպանցիկ կը խօսենք, դա յաջորդիւ ուսումնասիրութեան նիւթ է: Բնիկ են համարուում այն բառերը, որոնք հայերէնը ժառանգել է հնդեւրոպական լեզուից: Փոխառութեան դէպքում դիտուում է լեզուական այս կամ այն տարրի, հիմնականում բառի անցումը մի լեզուից միւսին: Տարբերակուում են անմիջական (ուղղակի), միջնորդաւորուած (անուղղակի), բանաւոր, գրաւոր (գրքային), գրական փոխառութիւններ: Զուգահեռաբար կան, այսպէս կոչուած, խառը հիբրիդ կազմութիւններ՝ բնիկ և փոխառեալ արմատներով: Միջին հայերէնի բառապաշարում բազմաթիւ են օտար բառերի ու բառակապակցութիւնների պատճենումները, որոնք, ինչպէս նշում է Ռ. Ղազարեանը, հիմնականում գործել են գիտական գրականութեան մէջ և զգալի դեր են խաղացել գիտութեան տարբեր բնագաւառներին առնչուող նոր տերմինների ստեղծման գործում⁴: Յ. Կարստը, անդրադառնալով տերմիններին, արձանագրում է, որ կիլիկեան հայերէնի բառապաշարը պարունակում է զուտ հայկական տերմինների մի բազմութիւն, որոնցից դասական լեզուի մէջ ոչ մի հետք չկայ, դիցուք՝ ակոյա, աղէկ, դան «չոր», ըռովկիլ «սահմանափակուել, բաւարարուել մի բանով», խէլ «մօտ», կտրին «տղայ», հայնց «այնպէս», հաւնաւրել կամ հաւնովրել «ստիպել, բռնաբարել», ճիճն «յանախ», ճորտ, ցըղբել և ցըղբելութիւն «անուշադիր, անուշադրութիւն», փնտռել և այլն⁵:

Մեր հետազոտութեան մէջ Գրիգորիսի երկից քաղուած տերմինները վերլուծել ենք՝ ա. ըստ ծագումնաբանութեան և բ. ըստ բառակազմութեան:

Ա. Հստ ծագումնաբանութեան բժշակարանում առկայ տերմինները դասակարգել ենք բնիկ (հայկական) և փոխառեալ խմբերում: Նշենք, որ փոխառեալ տերմինները աչքի են ընկնում յոյժ առատութեամբ և բազմազանութեամբ: Գտել ենք մօտ 163 փոխառեալ տերմիններ, այդ թուում՝ արաբական մօտ 119, յունական մօտ 17, պարսկական 12, լատինական 3, ասորական 1, ծագումն անորոշ 11:



Բերենք փոխառեալ տերմինների բնութագրական օրինակներ:

Արաբական փոխառութիւններ

արաղան (երաղան, իարաղան)* - դեղնախտ, icterus

⁴ Տե՛ս Ղազարեան Ռ. Ս., Միջին գրական հայերէնի բառապաշարը, Եր., 2001, էջ 89:

⁵ Տե՛ս Կարստ Յ., Կիլիկեան հայերէնի պատմական ֆեռականութիւն, Եր., 2002, էջ 133:

* Մէջբերուող տերմինները փաղել ենք հետեւեալ հրատարակութիւնից՝ Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց գրքից (Երեւան, 1962):

բովսար - գոլորշի
 բուրհ - բերանի գարշ հօտ
 զուքամ (զուգամ, սուքամ) - հարբուխ, coryza
 ըռաճայ - կեղծ հղիութիւն, արգանդի ֆիբրոմայ, fibromioma uteri
 ըռաշայ - դող, tremor
 ըստըսխայ - ալտուց, oedema
 թուխմայ - ստամոքսի սուր խանգարում, gastritis acuta
 կոլիկ - փորի սաստիկ ցաւ, գալարումով, colica abdominis
 ճըմուտ (ճմուտ) - կոմա, քնափութիւն
 նըսխան (նսխան) - մոռացկոտութիւն, յիշողութեան կորուստ, amnesia
 նթու - ուռուցք, պոպոզ, արտափքում, flatulencia, flaius
 նխայ - ողնուղեղ, medulla spinalis
 նօքաթ (նօպաթ) - նոպայ
 շարիան (շորիան) - զարկերակ, pulsus
 շթրայ (շերթայ) - կոպերի կծկում, blepharospasmus
 պահր - թոքախտ
 պարաշ (պարայշ, պարաս) - պէպեն
 պղամ - լորձ
 պուսեր (պուայսեր) - մաշասուլ, թուլթք, harmorrhoides
 սապաթ (սըպատ, սպաթ) - ծանր, հիւանդագին քուն
 սարատայն - քաղցկեղ, cancer
 սատայ - սեւ մաղձ, լեղի
 սքթէ (սքդէ, սքտէ, սքթայ) - կաթուած, apoplexia cerebri
 տալըֆիլ - փղախտ, elephantiasis
 տայուն - ժանտախտ, pestis
 տուար (դուար, դըվար) - գլխապտոյտ, vertigo
 ֆըսխ (փսխ) - հիւսուածքների բաժանում, անջատում

Յունական փոխառութիւններ

դիապետ (դիայպետ, տիապետ) - շաքարախտ
 ըռամատիս - հոսել բառից, այստեղ՝ վերին շնչառական ուղիների բորբոքում, յարբուխ
 լիթրուդոս - յիշողութեան կորուստ, amnesia
 լիփուրիայ ու տիֆուտըս - տիֆային բառից, մի տեսակ տենդային հիւանդութիւն, տիֆ
 սլիմիսիայ - լուսնոտութիւն
 սնթերի - դիզինթերիա, dysentery

Պարսկական փոխառութիւններ

հուք փարսի - կարծր խոց, ulcus durum
 նըզլայ (նզլայ, նզլէ) - գրիպ
 պըթըռ (պըթռ, պթըր) - մաշկի և տեսանելի լորձաթաղանթի տարբեր բնոյթի ցաներ
 սարսամ - գանգուղեղի պատեանների բորբոքում, meningitis
 քապուս - մղձաւանջ, հիւանդագին տեսիլներ

Լատինական փոխառութիւններ

ելայուս (այիլայուս, այիլաուս) - լատ. ileus - աղիքների անանցանելիութիւն
 դուլուս (խուլուս) - լատ. colon - հաստաղի, խթաղի

Ասորական փոխառություններ

հազազ - մաշկային հիւանդութիւն, թեփոտում, pityriasis

Անյայտ ծագման

իրաս - ատամի ներադի բորբոքում

խառանի - եղջերէնի, եղջերաթաղանթ, cornea

սաֆայ - գլխի և արտեւանունքների գոնջութիւն, թեփոտում

Բնիկ կամ հայկական ծագման բժշկագիտական տերմինները Գրիգորիսի գըրքում իրենց քանակով զիջում են փոխառեալներին, բայց դրանք ընդհանուր հասկացութիւնների անուանումներ են, որոնց տարբեր մասնաւոր ախտաբանական դրսեւորումները արդէն արտայայտուում են փոխառեալ կամ հիբրիդային կազմութիւններով:

Այսպէս՝

այտ* - մարդու երեսի երկու կողմերից իւրաքանչիւրը, այտոսկրից մինչեւ ծնօտը,

արզանդ - կանանց այն գործարանը, որի մէջ սաղմը բեղմնաւորուում, սնոււմ և աճում է մինչեւ ծնունդը,

բերան - խոռոչ մարդու երեսի ստորին մասում, երկու ծնօտների միջեւ, որ շրջապատուած է այտերով, իսկ առաջից փակուում է շրթունքներով,

լեզու - մարմնի գործարան զետեղուած բերանի մէջ, մսոտ, տափակ, դիւրաշարժ, որ ծառայում է կերակուրը ծամելիս շուռ տալու, ճաշակելու, նոյնպէս և խօսելու,

համ - այն տպաւորութիւնը, որ մարդ ստանում է ճաշակելիքի գործարանով (բերանով, լեզուով, քիմքով),

ջերմն - տենդ, դող,

ջուր - օրգանիզմում արտադրուող հեղուկ,

սիրտ - մկանային անօթ,

տեսանելիք - հինգ զգայարաններից մէկը, որով տեսնում ենք,

քիրտն - ջրանման արտազատուող հեղուկ, ունի աղի համ և անախորժ հոտ:

Բ. Հստ բառակազմութեան բժշկարանում առկայ տերմինները բաժանել ենք պարզ, բարդ, ածանցաւոր խմբերի: Պարզ են այն տերմինները, որոնք կազմուած են մէկ արմատից՝ հիմնական ձեւոյթից. զոր օրինակ՝ ախտ, այտ, ատամ, բոր, բութ, գլուխ, գոգ, դեղ, դող, երակ, երես, ըղուղ, թոմ, թոմ, լերդ, լինդ, լուծ, խուլ, ծիծ, կող, կուզ, հազ, ձեռ, ձու, դարպ, դունկ, մազ, մաղձ, մաշկ, նզլայ, նթու, նիգ, ող, ոջիլ, ոտ, որդ, պոպոզ, պորտ, ջիլ, ջուր, սահր, սերմ, սիրտ, փոր և այլն:

Բարդ են այն կազմութիւնները, որոնք բաղադրուած են երկու և աւելի արմատներից: Բարդութիւնների հիմնական տիպը յօդակապաւոր և անյօդակապ իսկական բարդութիւններն են: Բերենք բժշկարանում առկայ բարդ տերմինների օրինակներ: Յօդակապաւոր իսկական բարդութիւններ՝ աղուեսացաւ, ելեւէջ, թուակուշտ, թոփացաւ, մեղրածոր, շարասիֆ, փաղաբուշտ և այլն, անյօդակապ իսկական բարդութիւններ՝ բարակցաւ, գայլցաւ, գոզկապ, կողցաւ, կողմաշկ, ստամոքցաւ, վատուծ, վարդցաւ, փողցաւ, օծսանդր, օծցաւ և այլն:

Ածանցաւոր են այն տերմինները, որոնք բաղկացած են միայն մէկ արմատից

* Բնիկ տերմինների բացատրութիւնները փաղել ենք հետեւեալ հրատարակութիւնից՝ Ստեփան Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1994:

և ունեն մէկ կամ աւելի ածանց: Այսպէս՝ ան/ուկ, այր/ուց/ֆ, արծ/ուիֆ, գիշ/ութիւն, գիր/ութիւն, գող/ութիւն, զգայ/ութիւն, թեփ/ուկ, թիկ/ումֆ, թուլ/ութիւն, թել/ֆ, լուծ/ական, լսել/ութիւն, խոց/տ/ուկ, խել/ութիւն, կոկ/ութիւն, հանգ/ստ/ութիւն, հիւանդ/ութիւն, հով/ութիւն, հպո/ոտ, յիշող/ական, յուլ/ութիւն, նեղ/ութիւն, նօսր/ութիւն, պաղ/ութիւն, պնդ/ութիւն, պոռնկ/ֆ, ջերմ/ութիւն, սել/ութիւն, տֆ/ուկ, ֆաղցր/ութիւն և այլն: Ակներեւ է, որ գոյական տերմինների հիմնական մասը կազմուած է -ութիւն, -ֆ ածանցների միջոցով, ածականական կառույցներում հանդիպել են -ոտ, -ական, -ուկ ածանցներով կազմութիւնները:

Ամփոփելով մեր ուսումնասիրութիւնը՝ կարող ենք ասել, որ Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց»-ը կիլիկեան նորմաւորման շրջանի միջին գրական հայերէնի դասական նմուշներից է, այսինքն՝ վաղ միջին գրական հայերէնի լեզուական համակարգի ուսումնասիրութեան հարուստ աղբիւր: Երկն արժէքաւոր է ոչ միայն իր բովանդակութեամբ, այլեւ՝ բառապաշարի հարստութեամբ: Գրիգորիսի լեզուն հասկանալի է, պարզ, սակայն մեծ աղբիւրներ ունի նաեւ հին գրական հայերէնի՝ գրաբարի հետ: Գրիգորիսի երկը հայ բժշկագիտութեան լեզուն հարստացրել է բազմաթիւ տերմիններով, տերմինակազմութեան ընթացքում կիրառուել են ոչ միայն փոխառեալ, այլեւ բնիկ արմատներ: Այսօր էլ այդ տերմինների զգալի մասը գիտական շրջանառութեան մէջ է: Հետեւաբար, հայերէնը իր զարգացման բոլոր շրջաններում ունեցել է բառակազմական ճկուն հնարաւորութիւններ վերացական տարբեր տիպի հասկացութիւնները, դրանց տեսակների անուանումները հայերէն դարձնելու համար: Դրա վկան մեր ուսումնասիրութեան նիւթն է:

Վ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՓՈԽԱՌԵԱԼ ԵՒ ԲՆԻԿ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐԻՍԻ «ՔՆՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ ԵՒ ՆՈՐԻՆ ՑԱՒՈՅ»

ԵՐԿՈՒՄ

Ամփոփում

Գրիգորիսը XII-XIII դդ. նշանաւոր հայ բժշկապետներից է: Բանասիրական տարբեր աղբիւրների վկայութեամբ՝ նա ապրել և գործել է Կիլիկեան Հայաստանում: Գրիգորիսի ամենայայտնի պահպանուած երկը «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» ծաւալուն բժշկարանն է, որն իր նշանակութեամբ առանձնաշատուկ տեղ է գրաւում միջնադարեան հայ բժշկագիտութեան մէջ: «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց»-ը կիլիկեան նորմաւորման շրջանի միջին գրական հայերէնի դասական նմուշներից է, այսինքն՝ վաղ միջին գրական հայերէնի լեզուական համակարգի ուսումնասիրութեան հարուստ աղբիւր:

Մեր զեկուցման նպատակն է հետազօտել Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց» երկում վկայուած բնիկ և փոխառեալ տերմինները, որոշել դրանց ծագումը, կառուցուածքը, պահպանուածութեան աստիճանը արդի գրական արեւելահայերէնում: Բառապաշարը ուսումնասիրել ենք համեմատական մեթոտով, իսկ արդիւնքները ներկայացրել վիճակագրութեան միջոցով:

V. BERBERYAN

**BORROWED AND NATIVE TERMS IN
"ANALYSIS OF THE NATURE OF MAN AND HIS PAINS" BY GRIGORIS**

Summary

Grigoris was one of the famous Armenian physicians of the XII-XIII centuries. According to various philological sources, he lived and worked in Cilician Armenia. The most famous survived work by Grigoris is "Analysis of the nature of man and his pains" – a voluminous medical reference book, occupying a special place in Medieval Armenian medical science. "Analysis of the Nature of Man and his Pains" is one of the classical examples of the middle literary Armenian language of the Cilician period, and is a rich source for studying the linguistic system of the early Middle Armenian.

The purpose of our report is to present the native and borrowed terms found in "Analysis of the Nature of Man and his Pains", to analyze their origin, structure, and level of preservation in the contemporary literary Eastern Armenian language. We have studied the vocabulary using the comparative method, and presented the results by statistical analysis.

